ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2006
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2006թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Լ. Հովականյանը, Գ. Վարդապետյանը, Ս. Իսրայելյանը:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2006թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 540.3 մլրդ դրամ կամ 1,290.2 մլն ԱՄՆ դոլար:

	31.12.02		30.06.03		31.12.03		30.06.04		31.12.04		30.06.2005		31.12.2005		30.06.2006	
	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար
Պետական պարտք	640.6	1,095.3	671.7	1,148.6	664.4	1,173.9	617.2	1,154.7	621.1	1,278.4	552.9	1,250.0	546.1	1,213.2	540.3	1,290.2
այդ թվում՝																
Ներքին պարտք	40.8	69.8	41.0	70.2	43.1	76.2	45.0	84.2	46.4	95.5	59.9	135.5	51.3	114.0	55.2	131.8
Արտաքին պարտք	599.8	1,025.5	630.6	1,078.4	621.3	1,097.7	572.2	1,070.5	574.7	1,182.9	493.0	1,114.5	494.8	1,099.2	485.1	1,158.4

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք

ՊՊ- պետական պարտատոմսեր

ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր

ՄԺՊ-միջին ժամկետայնության պատատոմսեր

ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ԳՊ-Գանձապետական պահառու

2006 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 55,219.77 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ 7,167.10 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր՝ 37,844.37 մլն. դրամ և երկարաժամկետ պարտատոմսեր՝ 10,208.30 մլն.դրամ
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը՝ 4,121.60 մլն դրամ,
- ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.0043 %,
- ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1222 օր (ՊԿՊ-եր՝ 150 օր, ՄԺՊ-եր՝ 705 օր և ԵՊ-եր՝ 3889օր):

Աղյուսակ 1

2006 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

(մլն դրամ)

	առ 01.07.2005թ.	առ 01.01.2006թ.	առ 01.07.2006թ.
Ներքին պետական պարտքը (մլն. դրամ), որից՝	**59,923.49**	**51,347.50**	**55,219.77**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	16,477.50	6,500.00	7,167.10
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն. դրամ)	37,745.99	36,487.50	37,844.37
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	5,700.00	8.360.00	10,208.30
ՆՊՊ-ի ժամկետայնություն (օր), որից՝	**771**	**1100**	**1222**
կարճաժամկետ պարտատոմսեր (օր)	115	190	150
միջին ժամկետ. պարտատոմսեր (օր)	646	721	705
երկարաժամկետ պարտատոմսեր (օր)	3027	3456	3889
ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%) որից՝	**7.3087**	**7.3085**	**7.0043**
կարճաժամկետ պարտատոմսեր (%)	4.4678	3.8002	4.1613
միջին ժամկետ. պարտատոմսեր (%)	8. 3947	7.7077	7.1578
երկարաժամկետ պարտատոմսեր (%)	8.3296	8.2936	8.4316

Գծապատկեր 1

2006թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2006 թվականի I կիսամյակում տեղի է ունեցել պետական պարտատոմսերի 17 թողարկում, որից 9-ը՝ ՊԿՊ-ի, 6-ը՝ ՄԺՊ-ի, իսկ 2-ը՝ ԵՊ-ի: Թողարկումների ընդհանուր ծավալը կազմել է 17.0 մլրդ. դրամ, տեղաբաշխման ծավալը՝ 15.88 մլրդ. դրամ: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալում ՊԿՊ-ը կազմել են 5.0 մլրդ. դրամ (29.4%), ՄԺՊ-ը՝ 9.0 մլրդ. դրամ (52.9%), իսկ ԵՊ-ը՝ 3.0 մլրդ. դրամ (17.6%): ՊԿՊ-ի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 555.6 մլն. դրամ, ՄԺՊ-ինը՝ 1,500.0 մլն. դրամ, իսկ ԵՊ-ինը՝ 1,500.0 մլն դրամ: Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.03 անգամ և կազմել 34.6 մլրդ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1536 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.1255% (տե՛ս աղ. 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 15 տարի, նվազագույնը՝ 26 շաբաթ:

Աղյուսակ 2

2006 թվականի I կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	4.5000	5.2480	4.9396	455
Փետրվար	3.8446	5.0000	4.5864	489
Մարտ	4.0000	8.9888	6.5803	2842
Ապրիլ	3.4000	4.9800	5.7795	964
Մայիս	4.8000	6.9898	6.1700	1340
Հունիս	4.8500	10.0000	7.6055	1906
I կիսամյակ	3.4000	10.0000	6.1255	1536

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 94.81%-ը (32,774.7 մլն դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 5.19%-ը (1,793.0 մլն դրամ)՝ ներդրողների հաշվին (որից՝ ԳՊ-ն 1.36%):

Աղյուսակ 3

2006թվականի I կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած ՊՊ տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	92.67	7.33	-	100.00
Փետրվար	83.35	12.65	4	100.00
Մարտ	60.88	38.54	0.58	100.00
Ապրիլ	59.29	33.17	7.54	100.00
Մայիս	55.43	40.08	4.49	100.00
Հունիս	50.79	47.63	1.58	100.00
I կիսամյակ	67.19	29.84	2.97	100.00

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2006 թվականի հունիսի 30-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում 01.01.2006թ-ի համեմատ նվազել է ոչ բանկ ռեզիդենտ ներդրողների տեսակարար կշիռը՝ հասնելով 5.4%-ի, իսկ ոչ ռեզիդենտ ներդրողների կշիռը փոփոխություն չի կրել (նրանց կշիռը 0% է, բացարձակ մեծությամբ՝ ընդամենը 130,000 դրամ ծավալով պարտատոմս):

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2006թ. I կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 381 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 36,003.1մլն. դրամ, որից՝
  1. Ընդամենը ՊԿՊ՝ 2,105.5 մլն. դրամ
  2. Ընդամենը ՄԺՊ՝ 22,758.8 մլն. դրամ
  3. Ընդամենը ԵՊ՝ 11,138.8 մլն. դրամ
- ԿԲ-ի կողմից գործարք չի կատարվել
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.24%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 2049օր
- Միջին օրական ծավալը՝ 290.3 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 3:

Գծապատկեր 3

2006 թվականի I կիսամյակում կատարված գործարքների ծավալները և եկամտաբերությունը ըստ ամիսների



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
ծավալ (մլն.դրամ)	6,954.7	4,087.2	5,550.6	6,012.2	5,896.3	7,502.1
միջ.կշռ. եկամտ.(%)	6.3388	5.3719	6.4894	6.0635	6.0619	6.6996

Գծապատկեր 4

2006 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնությունները ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	5 և ավել տարի
գործ. ծավալ (մլն.դրամ)	939.1	607.4	584.9	9,870.3	5,514.9	7,347.5	11,138.9
եկամտ. (%)	3.41	3.67	3.90	5.49	5.90	5.77	7.87

Գծապատկեր 5

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը



Գծապատկեր 6

2006 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2006թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված բոլոր 9 թողարկումներին,
- ներդրման ծավալը կազմել է 471.5 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 52.4 մլն. դրամ,
- մարվել է 173.5 մլն. դրամի պարտատոմս,
- թողարկված ՊԿՊ-երի 9.43 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով,
- դիլեր բանկեր է փոխանցվել 1.5 մլն. դրամի պարտատոմս,
- 2006 թ. հունիսի 30-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 768.1 մլն. դրամի պարտատոմս (տես գծ. 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2006թ. հունիսի 30-ի դրությամբ

(մլն. դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 684, որոնցից 3-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 8),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2006թ. առաջին կիսամյակի ընթացքում



	Հունվար-06	Փետրվար-06	Մարտ-06	Ապրիլ-06	Մայիս-06	Հունիս-06
Դեպո հաշիվների քանակը	681	682	683	684	684	684

- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 166 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 26.2 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 16.3 մլն. դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 3.2 թողարկման:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2006թ-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործառնությունները

(մլն դրամ)

	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Աճուրդների քանակը	Մեկ աճուրդի ներդրման միջին ծավալը
14-26 շաբ.	49.1	0.9	50	50	10.6	1	50
27-39 շաբ.	45.2	1.2	46.3	199	42.2	3	66.3
40-52 շաբ.	74.7	2.4	77.2	222.5	47.2	5	44.5
Ընդամենը	169	4.5	173.5	471.5	100.00	9	52.4

Աղյուսակ 5

2006թ. հունիսի 30-ի դրությամբ ԳՊ-ի միջոցով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-եր

(մլն. դրամ)

	14-26 շաբաթ	27-39 շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Անվանական արժեք	49.4	247	471.6	768.1
Գնման գին	48.5	239.1	452.8	740.4
Սպասարկում	0.97	7.9	18.8	27.7
Միջին եկամտաբերություն(%)	3.97	4.59	4.23	4.33
Կշիռը(%)	6.44	32.15	61.41	100.00

Գծապատկեր 9

Ներդրումներն ըստ ժամկետայնության 2006թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն. դրամ)



	14-26 շաբաթ	27-39շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Թողարկման ծավալի 10 %	50.0	200.0	250.0	500.0
Տեղաբաշխում	50.0	199.0	222.5	471.5
Կշիռը (%)	100.0	99.5	89.0	94.3

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2006 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,158.4 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 992.1 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 85.6%),
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 166.3 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 14.4%):

2005 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 5.4 տոկոսով կամ մոտ 59 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է եղել հիմնականում ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի արտաքին վարկային զամբյուղը կազմող հիմնական արժույթների փոխարժեքների փոփոխությամբ[1]:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

2006թ. հունիսի 30-ի դրությամբ



2006 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

[1] 31.12.2005թ. դրությամբ 1SDR=1.42927USD, 1EUR =1.1797 USD
30.06.2006թ. դրությամբ 1SDR=1.47937USD, 1EUR =1.2713 USD

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2006թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**48.615**	**34.295**	**29.251**	**5.044**
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**43.670**	**13.257**	**8.656**	**4.601**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*39.661*	*11.267*	*7.505*	*3.761*
ա) Համաշխարհային Բանկ	37.164	6.620	3.407	3.214
որից՝				
Միջազգային Զարգացման Գործակալություն	37.164	6.159	3.091	3.069
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	-	0.461	0.316	0.145
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	2.496	0.281	0.129	0.152
գ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	4.366	3.970	0.396
2. Օտարերկրյա պետություններ	*4.009*	*1.990*	*1.151*	*0.839*
ա) ԱՄՆ	-	1.655	1.151	0.504
բ) Գերմանիա (KfW)	3.275	0.313	-	0.313
գ) Ֆրանսիա	-	0.016	-	0.016
դ) Ճապոնիա	0.734	0.006	-	0.006
II. ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**4.945**	**21.038**	**20.595**	**0.443**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*4.945*	*21.038*	*20.595*	*0.443*
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	4.945	21.038	20.595	0.443

2006թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 98.5%:

2006թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 89.2%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 10.8%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր 11):

Գծապատկեր 11

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2006թ. հունիսի 30-ի դրությամբ



2006թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրվել են երեք նոր վարկային համաձայնագրեր.

- **Աղքատության հաղթահարման աջակցության երկրորդ վարկային ծրագիր** (վարկատու՝ *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ **14.1 մլն SDR**,
- **Վերականգնողական էներգիայի վարկային ծրագիր** (վարկատու՝ *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ **3.5 մլն SDR**,
- **Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագիր** (վարկատու՝ *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ **4.4 մլն SDR**: